

**2015 ԹՎԱԿԱՆԻՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ են տարվել օտարերկրյա պետությունների համապատասխան գերատեսչությունների և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության միջև գործող պայմանագրերի, համաձայնագրերի, մի շարք միջազգային կազմակերպությունների հետ կնքված հուշագրերի, կոնվենցիաների շրջանակներում, ինչպես նաև միջկառավարական հանձնաժողովների արձանագրություններում առկա սպորտի և երիտասարդության ոլորտին առնչվող կետերի կատարման ուղղությամբ:

2015 թվականի փետրվարի 17-19-ը Բելառուսի Հանրապետության սպորտի և զբոսաշրջության նախարար Ալեքսանդր Շամկոյի հրավերով նախարար Գաբրիել Ղազարյանը՝ որպես պատվավոր հյուր, ներկա է գտնվել բիաթլոնի պատանիների և երիտասարդների առաջնությանը, որից հետո նախարարները քննարկել են սպորտի ոլորտում երկուստեք համագործակցության ընդլայնման հարցեր: Ստորագրվել է «ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Բելառուսի Հանրապետության սպորտի և տուրիզմի նախարարության միջև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում 2015-2016 թվականների համագործակցության ծրագիրը»:

2015 թվականի փետրվարի 18-19-ը Բելառուսի Հանրապետության մայրաքաղաք Մինսկում՝ ԱՊՀ Գործադիր կոմիտեում, կայացել է ԱՊՀ մասնակից երկրների ազգային մարզաձևերի զարգացման աշխատանքային խմբի նիստը, որին մասնակցել է ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակից Գագիկ Ղազարյանը:

2015 թվականի մարտին նախարար Գաբրիել Ղազարյանը հանդիպել է ՌԴ սպորտի նախարարի տեղակալ Պավել Նովիկովի հետ և քննարկել մասսայական սպորտին առնչվող հիմնահարցեր:

2015 թվականի ապրիլի 27-30-ը Բելգիայի Թագավորության Բրյուսել քաղաքում անցկացված երիտասարդական աշխատանքի եվրոպական կոնվենցիային Հայաստանի Հանրապետության պատվիրակության կազմում մասնակցել է նաև ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության երիտասարդական քաղաքականության վարչության պետ Թամարա Թորոսյանը:

2015 թվականի մայիսի 29-30-ը ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Գաբրիել Ղազարյանի հրավերով Երևան է ժամանել Բելառուսի Հանրապետության սպորտի և զբոսաշրջության նախարար Ալեքսանդր Շամկոն: Այցի ընթացքում քննարկվել են հարցեր՝ կապված ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում պետական քաղաքականության, ֆիզիկական կուլտուրայի և մարզական շարժման կառավարման առանձնահատկությունների հետ, արդիական այլ հարցեր, ինչպես նաև ձեռք են բերվել պայմանավորվածություններ:

2015 թվականի հունիսի 3-5-ը Սոչիում կայացել է ԱՊՀ անդամ պետությունների ֆիզիկական կուլտուրայի և սպորտի խորհրդի հերթական նիստը, որի ընթացքում նախարար Գաբրիել Ղազարյանը ստորագրել է «Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և Ռուսաստանի Դաշնության սպորտի նախարարության միջև ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում համագործակցության մասին» հուշագիրը:

2015 թվականի հունիսի 15-ին Բելգիայի Թագավորության մայրաքաղաք Բրյուսելում ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Արսեն Քարամյանը մասնակցել է «Մարդկանց միջև շփումներ» խորագրի ներքո Արևելյան գործընկերության չորրորդ պլատֆորմի 13-րդ հանդիպմանը:

2015 թվականի հունիսի 22-ին Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավայում ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Արսեն Քարամյանը մասնակցել է Վիշեգրադի խմբի երկրների (Չեխիա, Սլովակիա, Լեհաստան և Հունգարիա) և Արևելյան գործընկերության երկրների (Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա և Ուկրաինա) երիտասարդության հարցերի նախարարների առաջին համաժողովին:

2015 թվականի հուլիսի 25-27-ը Հայաստանի Հանրապետության կառավարական պատվիրակության կազմում նախարար Գաբրիել Ղազարյանը մասնակցել է Թբիլիսիում կայացած Եվրոպական երիտասարդական օլիմպիական փառատոնի բացման պաշտոնական արարողությանը և հետևել խաղերի ընթացքին:

2015 թվականի հոկտեմբերի 28-29-ը Ռուսաստանի Դաշնության մայրաքաղաք Մոսկվայում ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ Արսեն Քարամյանը մասնակցել է ԱՊՀ պետությունների երիտասարդության հարցերի խորհրդի նիստին:

2015 թվականի դեկտեմբերի 17-20-ը Բելառուսի Հանրապետության մայրաքաղաք Մինսկում անցկացվելու է արագ և կայծակնային շախմատի Եվրոպայի առաջնությունը, որին որպես պատվավոր հյուր ներկա է գտնվել Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարար Գաբրիել Ղազարյանը:

2015 թվականին նախարար Գաբրիել Ղազարյանը հանդիպել է ՀՀ-ում հավատարմագրված մի շարք երկրների դեսպանների, միջազգային մարզական կառույցների ղեկավարների և մարզաշխարհի ականավոր ներկայացուցիչների հետ:

Մի շարք երկրների հետ կնքված փոխըմբռնման հուշագրերի և համաձայնագրերի շրջանակներում ՀՀ հավաքական թիմերը տարբեր մարզաձևերից իրականացրել են համատեղ ուսումնամարզական հավաքներ, ինչպես նաև մասնակցել են միջազգային հեղինակավոր մրցաշարերի և՛ Հայաստանի Հանրապետությունում, և՛ արտերկրում:

Նախարարությունն իր իրավասության սահմաններում աջակցել է Հայաստանում և արտերկրում անցկացվող տարատեսակ միջազգային մարզական միջոցառումներին մասնակցող Հայաստանի և այլ երկրների մարզիկներին մուտքի արտոնագրեր ստանալու և դիվանագիտական կառույցների հետ առաջացած տարաբնույթ խնդիրների լուծման հարցերում:

Աշխատանքներ են կատարվել նաև միջազգային մի շարք հեղինակավոր կազմակերպությունների հետ (Ֆրանկաֆոնիա, Համաշխարհային հակադոպինգային գործակալություն (WADA), Սպորտի մասին ընդլայնված մասնակի համաձայնագիր (EPAS)) և այլն: